

Տ. ՀԱՅՐԻԿ ԱԲԵՂԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
(ավազանի անունը՝ Հովիկ)

Ծնվել է 1975 թ. ապրիլի 1-ին Երևան քաղաքում:

1981-1989 թթ. սովորել է Երևանի Էրեբունու շրջանի թիվ 160 միջնակարգ դպրոցում:

1989-1993 թթ. ուսանել և գերազանց առաջադիմությամբ ավարտել է Երևանի Սննդի արդյունաբերության տեխնիկումը:

1993-1995 թթ. ուսանել է Շիրակի թեմի Հոգևոր Ընծայարանում, ապա ուսումը շարունակել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում՝ այն ավարտելով 2001 թ.:

2001 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս նախավկայի տոնին, ձեռամբ Տ. Միքայել եպիսկոպոս Աջապահյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2001 թ. հուլիսից, ուսումնառությունը ավարտելուց հետո, Վեհափառ հայրապետի բարձր կնօրհնությամբ աշխատանքի է անցել նախ Մայր Տաճարի թանգարանում, ապա Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցում, որպես լուսարար:

2002 թ. սեպտեմբերից Նորին Սրբության օրհնությամբ նշանակվել է ՀՀ ԶՈՒ հոգևոր ծառայության առաջնորդի օգնական, որտեղ և ցայսօր իր ծառայությունն է բերում:

2003 թ. հոկտեմբերի 30-ին պաշտպանել է ավարտաճառ՝ «Ժամանակակից սպիրիտուալիզմ» թեմայով:

2003 թ. նոյեմբերի 23-ին, ձեռամբ Տ. Դավիթ արքեպիսկոպոս Սահակյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա: